Մայրիկ ամեն մանկիկին
There's a mother out there for every child
Мама каждому малышу

Բարև ձեզ,

«Բարի մամա» բարեգործական կազմակերպության հիմնական նպատակներն են.

- կանխարգելել հաշմանդամության պատճառով նորածիններին լքելու գործընթացը,
- աջակցել մանկատան հաշմանդամություն ունեցող սաներին՝ կազմակերպելով ժամանցային միջոցառումներ, կրթական ծրագրեր և այլն,
- նպաստել երեխաների և իրենց կենսաբանական ընտանիքների վերամիավորմանը:

«Բարի ամառ» ծրագրի մանրամասները

Կազմակերպության ամենալուսավոր և պոզիտիվ նախագծերից մեկը «Բարի ամառն» է, որն իրականացվում է արդեն 7 տարի: Ծրագրի ընթացքում «Բարի մամա» ՀԿ անդամ կամավորները կազմակերպում են ամառային ճամբար հաշմանդամություն ունեցող մանկատան սաների, սահմանամերձ գյուղերում բնակվող երեխաների և անապահով ընտանիքներում բնակվող հաշմանդամություն ունեցող երեխաների համար:
Ամեն օր շփվելով երեխաների հետ՝ մենք տեսնում ենք, նրանց չորս պատերից դուրս՝ բնության գիրկ հանելու, առօրյայից կտրելու, նրանց կյանքը թեկուզ մի քանի օրով գունավորելու անհրաժեշտությունը:
Արցախյան պատերազմը ևս իր հետ բերել է բազում հոգեբանական խնդիրներ հատկապես Արցախից տարհանված և սահմանամերձ գյուղերում բնակվող երեխաների մոտ: Քանի որ

հանգստի նպատակին դժվար կարողանան գումար տրամադրել՝ «Բարի մամա» ՀԿ այս տարվա թիրախում հատկապես այս երեխաներն են:

Մենք կազմակերպում ենք ծրագրերն ինքնուրույն, որպեսզի համոզված լինենք, որ յուրաքանչյուր լումա իսկապես ծառայում է հենց երեխաների կարիքներին: Եվ, ամենակարևորը, այդ ամենն անում ենք կամավոր սկզբունքով:

Նախորդ տարիներին «Բարի ամառ» ծրագիրը կազմակերպվեց Սևանում և Աղվերանում: Ամառային արձակուրդները ոչ միայն ազդեցին երեխաների հոգեբանության վրա, նրանց կտրեցին առօրյա հոգսերից, այլև ամբողջությամբ փոխեցին նրանց ներաշխարհը: Դրական և ընտանեկան մթնոլորտը ամրապնդեցին ի սկզբանե դրված նպատակը. օգնել երեխաներին հաղթահարել հոգեբանական խնդիրներն ու ընտանեկան ջերմություն ստանալ:

Անհնար է նկարագրել երեխաների ուրախությունը, դեմքի արտահայտությունը, երբ տեսան կապուտակ Սևանը: Հաշմանդամություն ունեցող երեխաների հետ ճամաբարում էին նաև կամավորների երեխաները, ովքեր օգնում էին խնդիրներ ունեցող հասակակիցներին, հենց մանկուց սկիզբ դնելով ներառականությանը: Մինչ այսօր էլ երեխաները կապը պահպանում են մանկատան ընկերների հետ, այցելում:

Հաշվի առնելով «Բարի ամառ» ծրագրի՝ երեխաների վրա թողած դրական ազդեցությունը՝ «Բարի մամա» ՀԿ դիմեց ՀՀ կառավարությանը՝ խնդրելով տրամադրել հողատարածք Սևանալճի ափին, որը հետագայում կդառնար ոչ միայն ճամբար, այլ նաև տարածաշրջանի համար եզակի վերականգնողական կենտրոն:

ՀՀ Կառավարության որոշմամբ 2019 թ. տրամադրվեց հողատարածք Շորժա գյուղի մոտակայքում: Սկզբում ճամբարը վրանային էր, այնուհետև կառուցվեցին ճաշարանի, ննջարանի և խաղասենյակի հատվածները: Եւ արդեն կարող ենք նվիրել ամառային արձակուրդներ բազմաթիվ երեխաներին, իսկ ծախսերը կրճատվել են գրեթե կես անգամ:



Ծրագրի բյուջեն

Մեկ երեխայի ծախսը 7 օր/6 գիշեր կազմում է 49,000 դրամ: Գումարի մեջ ներառված են կեցության, սննդի, տեղափոխման ծախսերը, նվերի և շապիկի գինը: Ծրագրի ավարտին

մեր աջակիցներին կուղարկվի մանրամասն հաշվետվություն, թե ինչպես է ծախսվել հավաքված գումարը: Նախորդ տարվա ծրագրի բյուջեն կազմել է 4 մլն. ՀՀ դրամ:

Ինչպե՞ս միանալ ծրագրին

Ծրագրին աջակցելու տարբերակները բազմաթիվ են:

-Սննդի նվիրաբերում

-Տրանսպորտային միջոցի տրամադրում

-Կամավորների ներգրավում

-Գումարային աջակցություն

-Երեխաների կողմից նկարազարդված թափանցիկ տարայի տեղադրում ձեր կազմակերպության նախասրահում: Այնուհետև հունիսի 1-ին տարան բացվում է ձեր կողմից և ուղարկվում ՀԿ հաշվեհամարին:

Ինչպես նշված է վերևում՝ Ձեր կազմակերպության աշխատակիցները ևս ոչ միայն կարող են միանալ այս ակցիային ֆինանսապես, այլ նաև որպես կամավորներ ընդգրկվեն մեր ամառային ճամբարի ընթացքում:
Հուսով ենք, որ դուք ևս կդառնաք այս տարվա «Բարի ամառ» նախագծի մասը՝ Արցախից եկած, հաշմանդամություն ունեցող և սահմանամերձ գյուղերում բնակվող երեխաներին պարգևելով ներառական ճամբարի անմոռանալի օրեր:

Հարգանքով,
«Բարի մամա» բարեգործական ՀԿ թիմ